ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Սիրելի Սրբազան,

Ուրախ սրտով Մեր հայրական սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը կհղենք Ձերդ Սրբազնության և թեմական պատգամավորական ժողովիդ աստվածասեր անդամներուն, որոնք այս օրերուն Ձեր շուրջ հավաքված են քննարկելու անցնող տարեշրջանի թեմիդ գործունեությունը և կազմելու հառաջիկա տարեշրջանի աշխատանքի ծրագիրները։

Ահա երջանիկ առիթ մը, երբ տիրախնամ թեմիդ եկեղեցական համայնքներեն եկած ներկայացուցիչներ, սիրտ սրտի տված, եղբայրական զգացումներով համակված և մանավանդ մեր սուրբ եկեղեցվո գերագույն շահերու գիտակցությամբ, անգամ մը ևս պիտի վերանորոգեն իրենց ուխտը՝ անձնվիրաբար ու համերաշխորեն աշխատելու, միշտ ավելի անաղարտ ու պայծառ պահելու համար հայոց քրիստոնեական լույս հավատքը և հոգևոր ու մշակութային արժեքները հայ ոգեկանության, այնպես ինչպես ավանդեցին մեզի բոլորիս մեր լուսաբնակ նախնիք։

Մեր օրերում, երբ գրեթե ամեն տեղ, կրոնական ու բարոյական արժեքները տագնապալի շրջան մը կանցնեն, մենք՝ հայ քրիստոնյաներս, ի խնդիր մեր հոգևոր ու մշակութային գոյատևման, պետք է ամուր կանգնած մնանք դարերու փորձով նվիրագործված մեր եկեղեցական ազգային ավանդությանց վեմին վրա, առանց տարվելու նորելուկ մակերեսային երևույթներ, որոնք կուգան ու կանցնին ինչպես արմատներ չունեցող ամեն նորություն: Դառնորեն կսխալին բոլոր անոնք որ կկարծեն թե ամեն նորություն հառաջդիմություն է: Մանավանդ կրոնաբարոյական կյանքի մակարդակի վրա, չկա իրական հառաջդիմություն առանց դարերու տքնությամբ նվիրագործված արժեքներու: Ներկան ոգեկանության ավիշ կստանա անցյալեն, և ոգեկան նոր թռիչք՝ ապագայի տեսիլքներեն:

Ոգեկանության զարգացման ճանապարհին, ներկան վավերական ու մնայուն ոչինչ կրնա ստեղծել այսօր առանց անցյալի ժառանգության լույսին: Եվ նույն անցյալի լույսով է նաև որ ներկան կրնա բանալ նոր հորիզոններ դեպի ապագան: Ներկան ստեղծարար միջնորդն է, կիզակետն է անցյալի ու ապագայի միջև:

Եթե այս պահուս Մեզմե պատգամ մը կսպասեք, անավասիկ ձեզի կբերենք Մեր այս խոսքերը, հորդորելով ձեզ բոլորդ որ նույն գիտակցությամբ լուսավորված բանաք դռները գործունեության ձեր նոր տարեշրջանին:

«Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առատել լերուք ի գործս Տեառն յամենայն ժամ. գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58):

«Օրհնութիւն և սէր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ». ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 ապրիլ 1978 թ.